

2466



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար



Հակոբ Սիմիոյան

«03» 03 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 052 - 25

Նախաձեռնող՝

Ներսես Օհանյան

գ. Նորաշեն, Սարյան փ. պ. 9

Գործունեությունը՝

**Բաղրամյան բնակավայրի 3-րդ հողամասում
ջերմոցային տնտեսության կառուցում**
Արարադի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 052 - 25

«03» Յարսի 2025թ.

**Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բաղրամյան բնակավայրի 3-րդ հողամասում
ջերմոցային տնտեսության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	Ներսես Օհանյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Բաղրամյան բնակավայր

Ներածական մաս. Քաղաքացի Ներսես Օհանյանի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Բաղրամյան բնակավայրի 3-րդ հողամասում ջերմոցային տնտեսության կառուցումը:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արտաշատ համայնքի Բաղրամյան բնակավայրում: Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը գտնվում է Արարատյան հարթավայրի սահմաններում՝ կենտրոնական մասում: Մակերեսը հարթ է: Տեղամասում հետազոտված խորությունների սահմաններում ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 15 մ-ից խորը հատվածներում: Ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են: Կառուցապատվող տարածքի հեռավորությունը կից գտնվող ճանապարհից կազմում է 2 մ գնացքի զօնց՝ 170 մ և գերեզմանոցից՝ 174 մ:



Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախատեսվող գործունեության ընդհանուր հողամասի մակերեսը կազմում է 3.1625 հա, որից ջերմոցային տնտեսության տարածքը՝ 1.225 հա: Տարածքն ունի պարզ ռեկտանգուլյար կառուցվածք, կառուցապատված չէ, տարածքում չկան ծառեր, առկա է անկանոն աճած բուսականություն: Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներն օգտագործվել են գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքսի նպատակով:

Ջերմոցն իրենից ենթադրում է ոչ հիմնական շինություն, հավաքովի ժամանակավոր կոնստրուկցիա: Ջերմոցը հավաքվելու է ժամանակավոր կարկասով, որը բոլոր կողմերից փակվելու է ապակիներով: Ներսում՝ վերևի հատվածից դրվելու են վարագույրներ, որոնք պահպանելու են սաճիլները արևի ուղիղ ճառագայթներից, իսկ ձմռանը կանխելու են սառը օդի ներթափանցումը՝ ապահովելով լրացուցիչ ջերմություն և գազի ծախսի խնայողություն:

Նախատեսվում է ջերմոցում ներկառուցել տեխնիկական, տեսակավորման և սպասարկման սրահ: Սպասարկման սրահի ջեռուցումը նախատեսված է անհատական էլեկտրական տաքացուցիչով:

Ջերմոցային տնտեսությունն աշխատելու է հիդրոպոնիկ եղանակով, ինչի արդյունքում նվազելու է թե գազի, թե ջրի ծախսը: Ջերմոցում տեղադրվելու է պարարտանյութով հագեցած բաք, որը միացված է լինելու կաթիլային ոռոգման համակարգին, սակայն բաց է թողնվելու միայն ըստ անհրաժեշտության:

Շինհրապարակում նախատեսված է շինանյութերի պահման տարածք: Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստները, աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, ցանկապատվելու է ժամանակավոր պլաստիկ նեղ անցքերով ցանցով:

Ջերմոցի հովացման նպատակով կողային հատվածներում տեղադրվելու են հովացման համակարգեր, որոնք աշխատելու են էլեկտրաէներգիայով և արևային վահանակներով: Արևային վահանակները տեղադրվելու են վարչական շենքի կտուրին:

Ջրամատակարարումն իրականացվելու է համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, իսկ ջրահեռացման համար նախատեսվում է սեպտիկ հոր:

Ոռոգման ջուրը մատակարարվելու է «Արտաշատ» ՋՕԸ-ի կողմից՝ ապրիլ-նոյեմբեր ամիսներին, իսկ մնացած ամիսների համար՝ տեխնիկական ջուրը մատակարարվելու է ավտոռիստեռնով:

Շահագործման փուլում կենցաղային կոյուղաջրերն ինքնահոս հեռացվելու են դեպի սեպտիկ հոր:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի մակերես՝ 31625 քմ,
- կառուցապատման մակերես՝ 12250 քմ,
- կանաչապատման մակերես՝ 1000 քմ տարածքի վրա իրականացվելու է գազոնապատում և ծաղկանոց,
- Տարածքի մնացած հատվածը՝ 18375 քմ մակերեսով՝ կհարթեցվի:

Նախատեսվող գործունեության ժամանակ իրականացվելու է 150 խմ ծավալով հողային աշխատանքներ, որից հետո իջրը կկացնի 50 խմ, իսկ մնացածը՝ կտեղափոխվի մոտակա



աղբավայր, որը կհամաձայնեցվի համայնքապետարանի հետ: Նախատեսվում է տարածքից ամբողջությամբ հեռացնել գոյություն ունեցող բուսահողը՝ 216 խմ ծավալով՝ այն օգտագործելով տարածքում որպես գազոնապատման հիմք:

Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է բացառել տարածքում թափոնների բաց այրումը, անհրաժեշտ է շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար իրականացվելու է խախտված հողերի վերականգնում, հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով: Շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում, դրանց լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում: Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է բետոն կամ մանրախիճ, մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր՝ փոխարինելով նորով:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է փոշենստեցման համար կատարել ջրցան՝ ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր: Անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան՝ 1.1 խմ ծավալով: Ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր: Շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը կբերվի պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում գործունեության տարածքը և շրջակա միջավայրն անհրաժեշտ է զերծ պահել թափոնների կուտակումներից, շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով բեռնատարներով, բացառվելու է աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում, շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը և այլն հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են:



Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով, բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Ջերմոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,
- բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների իրազեկում և վերահսկում,
- շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի, հակահրդեհային պահանջների համապատասխանության ապահովում, խստիվ պահպանում,
- թափոնների տեղափոխման կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար ստուգում,
- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,
- արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում,
- շինարարության ժամանակացույցի իրականացման վերահսկում,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացման վերահսկում:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բաղրամյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, Արտաշատի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:



Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
3. Իրականացնել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ և որպես խնամքի պարտադիր միջոցառում՝ ապահովել կանաչ տարածքների ոռոգում:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Ներսես Օհանյանի կողմից ներկայացված Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բաղրամյան բնակավայրի 3-րդ հողամասում ջերմոցային տնտեսության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Սվետլանա Կիզիրյան